aruq @ Jrak

อกรับกรนด - บันดร 2014 NEWSLETTER JANUARY - MARCH 2014

Քրիստոս
Յարեա՜ւ
Ի Մեռելոց.
Օրհնեալ է
Յարութիւնն
Քրիստոսի



Christ has
Risen from
The Dead.
Blessed is
Christ's
Resurrection

U. Ստեփանոս Հայց. Առաքելական Եկեղեցի St. Stephen's Armenian Apostolic Church

38 Elton Avenue, Watertown, MA 02472 Հովիւ՝ ԱՐԺ. Տ. ԱՆԴՐԱՆԻԿ ԱՒ. ՔՀՆՅ<u>. ՊԱԼՃԵԱՆ</u> Office Tel. 617-924-7562 ● Fax: 617-924-6809 REV. FR. ARCHPRIEST ANTRANIG BALJIAN, Pastor

<mark>ፐሀ</mark> ዓ − JRAK	CONTENTS	
A Quarterly Publication of St. Stephen's Armenian Apostolic Church 38 Elton Ave., Watertown, MA 02472 Office: (617) 924-7562 -Fax: (617) 924-6809	PONTIFICAL ENCYCLICAL The Year of the Elderly	3
Hall: (617) 924-9860 Email: office@soorpstepanos.org Website: www.soorpstepanos.org	PRELACY NEWS Ghevontiank	6
Editorial Board Rev. Archpriest Antranig Baljian (Editor In Chief)	TRUSTEE CORNER	7
Silva Bahlavouni Yn. Arpineh Baljian (English Copy Editor)	APRIL 24 DIVINE LITURGY	8
Garbis Zerdelian (Armenian Copy Editor)	MEMBERSHIP DRIVE	8
Pastor Rev. Archpriest Antranig Baljian	SUPPORT THE JRAK	8
154 Worcester Lane, Waltham, MA 02451 Home: 781-209-1915 Cell: 617-283-3494 Email:DHTony@aol.com	LADIES GUILD News & Palm Sunday Bake Sale Flyer	9
	ELEMENTARY SCHOOL	10
Office Manager Silva Bahlavouni	News Donation	10 12
Board of Trustees Rev. Archpriest Antranig Baljian, President Raffi Manjikian, Chairman	Summer Program Flyer "Mayrig & Me" & "Manoug & Mayrig" Flyer Preschool Registration	13 14 15
Michael Guzelian, Vice Chairman Lucy Hoosian, Secretary	DATEV SUMMER PROGRAM	12
Tamar Kanarian, Treasurer Craig Avedikiian	EASTER PROGRAM	16
Armen Chakmakjian Houry Daghlian	BOOKS FOR GIFTS	18
Noushig Hagopian Armen Knaian	SATURDAY SCHOOL NEWS	19
Heather Krafian Becky Megerdichian (Alternate)	SUNDAY SCHOOL NEWS	22
Hovsep Melkeshian	BUY A SHINGLE	24
<i>NRA Delegates</i> Nayiri Baljian Bell	SUPPORT YOUR CHURCH	24
Jirair Barsoumian Houry Daghlian	PEWS DEDICATION	24
Mary Derderian Chris Hajian	SACRAMENTS	25
Charles Keumurian Allan Tutunjian	DONATIONS	26
St. Stephen's Armenian Elementary School Houry Boyamian, Principal	Memorial General Christmas Youghakin Poinsettias	
St. Stephen's Armenian	FOR YOUR INFORMATION	31
Saturday School Mayda Melkonian, Principal	GENOCIDE STATE HOUSE FLYER	32
St. Stephen's Sunday School Audrey Guzelian, Principal	Printed by Arvest Press, Inc.	

$\COMMODE \COMMODE \$

Տարեցները Աստուածաշունչին մէջ



Որպէս քրիստոնեայ ժողովուրդ, մեր կեանքին առնչուած ոեւէ երեւոյթի գծով աէտք նայինք անկէ Աստուածաշունչին, մեր ձիշդ առնելու մեկնակէտր եւ յստակ ուղղութիւնը։ Հին Կտակարանին մէջ "ծեր" եւ "երէց" բառերը կր գործածուին ընդհանրապէս որպէս հոմանիշ եւ անոնք յիշուած են բազմաթիւ առիթներով ու զանազան իմաստներով։ Այսպէս, երէց կամ ծեր կը կոչուէին քաղաքի մր երեւելիները ու դատաւորները

(Ա. Թագ. 8.4), քաղաքի մը կամ տան մը ազնուականներն ու իշխանները (Ծննդ. 50. 7), ցեղերու եւ գերդաստաններու առաջնորդները (Թուոց 11.16-17) եւ կամ ազգի մը գլխաւոր դէմքերն ու ղեկավարները (Ելից 3.16): Երէցներուն պաշտօնն էր, որպէս փորձառութիւն ու վաստակ ունեցող անձեր, ժողովուրդի կեանքէն ներս յառաջացած հարցերուն լուծումներ առաջարկել, ժողովուրդին դիմագրաւած մտահոգութիւնները քննել, անոնց կարիքներուն ընդառաջել եւ առաջնորդի դեր կատարել։

Նոր Կտակարանին մեջ նոյնպես երեցներ կը նկատուեին եկեղեցիներու առաջնորդներն ու քահանաները (Ա. Պետրոս 5.1-2), քաղաքներու ղեկավար դէմքերը (Ղուկ. 7. 3), ինչպէս նաեւ անոնք, որոնք նախանձախնդիր էին անցեալէն ժառանգուած աւանդութիւններու առողջ պահպանման (Մատթ. 15.1-2): Երէցներուն պարտականութիւնն էր մօտէն զբաղիլ եկեղեցւոյ կեանքին մէջ ստեղծուած խնդիրներով (Գործք. Առաք. 15.1-3), ջանադիր ըլլալ եկեղեցւոյ կարգ ու կանոնի պահպանման, (Մատթ. 15.1-2), քաջալեր ըլլալ Աստուծոյ խօսքի տարածման (Ա. Պետրոս 5.1-2), ապահովել եկեղեցւոյ տնտեսական եկամուտը (Գործք Առաք. 11.29-30) եւ անհրաժեշտութեան պարագային ժողովներ գումարել եկեղեցիէն ներս ծագած հարցերը քննելու (Ղուկ. 22.66):

Երէցներու կամ ծերերու յաձախակի յիշատակումը Աստուածաշունչին մէջ յստակօրէն ցոյց կու տայ, թէ անոնք ընկերութեան կեանքի մայր էջէն դուրս մնացած անձեր չեն եղած, այլ նո՛յնիսկ աստուածային յայտնութեան ծիրէն ներս անոնք կարեւոր տեղ ու դեր ունեցած են։ Տարեցները նկատուած են հոմանիշ խոհեմութեան, իմաստութեան, փորձառութեան, արդարամտութեան եւ հետեւաբար՝ ստանձնած են ղեկավարի պատասխանատուութիւն։

Տարեցները եկեղեցւոյ կեանքին մէջ

Եկեղեցւոյ հայրերը թէ՛ Աստուածաշունչի մեկնաբանութեան եւ թէ եկեղեցւոյ պատմութեան յատկացուած իրենց գրութիւններուն մէջ կարեւոր տեղ տուած են տարեցներուն, միշտ մեկնելով աստուածաշնչական վկայութիւններէն ու դէպքերէն; Անոնք ընդգծած են քրիստոնէական հաւատքի վկայութեան ու եկեղեցւոյ կազմակերպչական աշխատանքներուն մէջ տարեցներուն վերապահուած իւրայատուկ դերը։ Արդարեւ, եկեղեցւոյ հայրերը այնքա՛ն ուսանելի թելադրութիւններ ու վկայութիւններ ունին տարեցներուն մասին. օրինակ Յովհան Ոսկեբերան հայրապետը ծեր մարդը կը նմանցնէ հին գինիին ըսելով թէ՝ գինին որքան հիննայ աւելի արժէք կը ստանայ, նոյնպէս ալ Աստուծոյ հոգիով լեցուն մարդը երբ հիննայ, այսինքն ծերանայ, աւելի արժէք կը ստանայ ու ընկերութեան օգտաշատ կը դառնայ։

Բնականաբար, որպէս քրիստոնեայ ժողովուրդ, տարեցներուն նկատմամբ յատուկ յարգանք ու հոգածութիւն ունեցած է նաեւ մեր ժողովուրդը իր պատմութեան ընթացքին։ Մեր եկեղեցւոյ սրբազան հայրերը՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչէն ու Մեծն Ներսէսէն սկսեալ մինչեւ Ս. Ներսէս Շնորհալի, Խրիմեան Հայրիկէն սկսեալ մինչեւ վերջին ժամանակներու մեր հայրապետները, իրենց հովուապետական ծառայութեան մէջ յատուկ կարեւորութիւն տուած են տարեցներուն, ո՛չ միայն շեշտելով մեր ազգին տարեցները միշտ ուշադրութեան առարկայ դարձնելու հրամայականը, այլ նաեւ՝ անոնց համար ծերանոցներ ու հանգստեան տուներ շինելու անհրաժեշտութիւնը։

Յարգել եւ խնամել տարեցները

Ընկերութեան կեանքին մէջ տարեցներու ներկայութեան ու դերակատարութեան գծով ուրուագծային կերպով ներկայացուած պատկերը՝ թէ՛ Աստուածաշունչին, թէ՛ եկեղեցւոյ հայրերուն եւ թէ մեր ժողովուրդի պատմութեան մէջ յստակօրէն ի յայտ կը բերէ տարեցներու մօտ հետեւեալ նկատառելի յատկանիշները.- խոհեմութիւն, հանդարտամտութիւն, արդարամտութիւն, ժուժկալութիւն ու փորձառութիւն: Մարդկային կենցաղակերպին, մտածելակերպին ու գործելակերպին կապուած այս հինգ յատկանիշերը, առաւել կամ նուազ չափով, կը տեսնենք տարեցներուն մօտ բոլոր ժամանակներուն մէջ։ Արդարեւ, տարեց սերունդը աւիշը կը կազմէ ընկերութեան, հիմքը՝ ընտանիքին եւ զօրեղ կռուաններէն մէկը՝ ոեւէ կազմակերպութեան։ Մեր ժողովուրդը բարձրագոյն աստիձանի հոգածութիւն, սէր, խնամք ու յարգանք պէտք է ցուցաբերէ իր տարեց սերունդին նկատմամբ։ Հետեւաբար՝

Առաջին, անհրաժեշտ է պաշտպանել տարեցները։ Բացարձակապես ընդունելի չէ, որ տարեցները մեր կեանքէն հեռու, մեր կեանքի լուսանցքին վրայ ապրող անգօր, անպաշտպան ու անտէր մարդիկ նկատուին։ Տարեցներուն գերագոյն պաշտպանը ա՛զգն է՝ իր բոլոր խաւերով ու պատասխանատուներով։ Տարեցները անբաժան ու անբաժանելի մասը կը կազմեն մեր հայրենիքին, մեր եկեղեցւոյ, մեր կառոյցներուն, մեր ո՛ղջ ժողովուրդին։ Չմոռնանք սակայն, որ տկարութեան կամ դժուարութեան մէջ գտնուող ծերունիին տէրը առաջին հերթին իր ընտանիքն է, իր զաւակներն են։ Պատասխանատուութեան այս ոգին պէտք է խորապէս արմատանայ մեր ազգի զաւակներուն գիտակցութեան մէջ։

Երկրորդ, անհրաժեշտ է յարգել տարեցները։ Աստուածային պատուիրան է տարեցները լարգելը. ան նաեւ մարդկային կեանքի հիմնական օրէնքն է։ Տարեցները պէտք է յարգել երկար տարիներ իրենց կատարած ծառայութեան, վաստակած փորձառութեան ու ձեռք ձգած իմաստութեան համար։ Տարեցները հարկ է յարգել մեր առօրեայ կեանքի ընթացքին սիրոյ ու գուրգուրանքի յատուկ վերաբերում ունենալով անոնց նկատմամբ։ Երբեմն նոր սերունդին մօտ կը տեսնենք անտարբեր վերաբերում տարեցներուն հանդէպ։ Հին սերունդին եւ ընդհանրապէս երէցներուն նկատմամբ յարգանք ցուցաբերելը առանցքային տեղ պէտք է գրաւէ նոր սերունդի դաստիարակութեան մէջ։

Երրորդ, անհրաժեշտ է լսել տարեցները։ Ընդհանրապէս մեր կեանքին մէջ հակամէտ ենք խօսելու, թելադրելու, հրահանգելու։ Լսելը ինքնավստահութիւն կը ներշնչէ եւ իմաստութեան կ'առաջնորդէ մարդը։ Ճիշդ բաներ լսելու համար անհրաժեշտ է դառնալ տարիներու ընթացքին փորձառութիւն ձեռք ձգած տարեցներուն՝ անոնց կեանքէն քաղուած օրինակները, դրական կամ ժխտական, մեր կեանքին դիմաց ունենալու ու մեր կեանքին ուղեցոյցը դարձնելու։ Արդարեւ, նոր սերունդը շատ բան ունի սորվելիք հին սերունդէն։ Որքան ալ ներկայ աշխարհը իր հսկայ զարգացումով օժտած ըլլայ նոր սերունդը, տարեցներու կեանքի փորձառութիւնը իր կարեւոր տեղը ունի մասնագիտութեան կողքին։

շորրորդ, անհրաժեշտ է խնամել տարեցները։ Տարիքի բերումով տարեցները կարիքը ունին խնամքի, ամէ՛ն իմաստով։ Քրիստոնէական ու մարդկային իմաստով մեղաւոր է այն անձը, որ իր ալեհեր ծնողքին նկատմամբ կը թերանայ իր որդիական պարտաւորութիւնը արժանավայել կերպով ու լիովին կատարել։ Իսկ եթէ տարեց մը անտէր է, ընտանիք ու ազգական չունի, ինչպէս շեշտեցինք, անոր պաշտպանը ու խնամատարը պէտք է րլլայ ազգը. եւ փաստօրէն միշտ այդպէ՛ս եղած է։

Արդարեւ, ո՛չ միայն հեռաւոր ու մօտաւոր անցեալին, այլ այսօ՛ր եւս, պատի'ւ մեր ժողովուրդին, մեր տարեցներուն նկատմամբ մենք կը շարունակենք յատուկ հոգածութիւն ցուցաբերել։ Լիբանանի, Մուրիոյ, Յունաստանի, Միացեալ Նահանգներու մէջ, թերեւս նաեւ այլ տեղեր, ունինք լաւապէս կազմակերպուած ծերանոցներ ու հանգստեան տուներ, ուր տարեց սերունդին պատկանող մեր ազգին զաւակները ապաստան կը գտնեն եւ կը ստանան նաեւ բժշկական խնամք։

Եզրափակում եւ Գնահատանք

Ներկայ տարին "Տարեցներու Տարի" հռչակելով կ՛ուզենք հայրապետական Մեր բարձր գնահատանքը յայտնել տարեց սերունդին օգտակար հանդիսացող մեր բոլոր միութիւններուն, բարերարներուն, խնամակալութիւններուն, բժիշկներուն ու բոյժքոյրերուն։ Սիրելիներ, ինչ որ կը կատարէք՝ աստուածահաձոյ գործ է։ Միշտ յիշեցէք Աւետարանի .Բարի Սամարացիին առակը (Ղուկ. 10.30-37) եւ շարունակեցէ՛ք ձեր նուիրեալ ծառայութիւնը առաւե՛լ հաւատքով ու նուիրումով։

Մեր խոր գնահատանքն ու ջերմ շնորհակալութիւնը կ՛ուզենք յայտնել նաեւ Զուիցերիոյ, Գերմանիոյ, Միացեալ Նահանգներու ու Դանիոյ եկեղեցիներուն ու բարեսիրական այն կազմակերպութիւններուն, որոնք ցեղասպանութենէն յետոյ ծերանոցներ հաստատեցին Լիբանանի, Սուրիոյ ու Յունաստանի

մէջ եւ ապա զանոնք փոխանցեցին մեր ժողովուրդին՝ որոշ չափով նաեւ շարունակելով իրենց նիւթական նպաստը անոնց գործունէութեան։

Այս առիթով, մեր ջերմ թելադրութիւնն է.-

- ա) Իւրաքանչիւր ընտանիքի առաջնահերթ ու նուիրական պարտականութիւնը պէտք է ըլլայ իր տարեց անդամներուն նկատմամբ անհրաժեշտ հոգածութիւն ցուցաբերել բարձրագոյն աստիձանի նախանձախնդրութեամբ։
- բ) Մեր ժողովուրդի զաւակներուն, եւ յատկապէս մեր նոր սերունդին մօտ տարեցներուն նկատմամբ մեր ունեցած յարգանքը, սէրն ու նախանձախնդրութիւնը անհրաժեշտ է աւելի խորացնել։
- գ) Անհրաժեշտ է նիւթապէս սատարել գործող ծերանոցներու եւ ընկերաբժշկական կեդրոններու գործունէութեան, որպէսզի անոնք կարենան առաւել եւս բարելաւել ու ծաւալել իրենց մարդասիրական ծառայութիւնը։
- դ) Տարեցներու գծով մեր հոգածութիւնը աւելի կազմակերպ դարձնելու մտահոգութենէն մղուած, անհրաժեշտ է նոր ծրագիրներ մշակել արդիական ու մասնագիտական մօտեցումներով։ Մեր ունեւոր ազգայինները պէտք է լրջօրէն մտածեն յիշեալ կարիքներուն մասին։

Արդարեւ, ցեղասպանութենէն յետոյ մենք տեսանք լուռ տառապանքը ջարդ ու աքսոր ապրած մեր հայրերուն ու մայրերուն։ Անոնց յաջորդեց որբերու սերունդը, որ ինք եւս ապրեցաւ ցեղասպանութեան ահաւոր հետեւանքները։ Այսօր ու միշտ մենք երբե՛ք, երբե՛ք պէտք չէ մոռնանք մեր մեծ հայրերուն ու մայրերուն ապրած տառապալից կեանքը։ Տարեց սերունդը իր խոր հաւատքով, ամուր կամքով, չարքաշ աշխատանքով ու վառ տեսիլքով կերտեց մեր ժողովուրդի վերածնունդը։ Պատի՛ւ ու յարգա՛նք մեր հին սերունդին։ Ցեղասպանութեան 100-ամեակի նախօրեակին, եկէ՛ք երախտագիտական խոր զգացումով ու հաւատարմութեան ոգիով յիշենք մեր այն բոլոր տարեցները, որոնք զոհ դարձան ցեղասպանութեան։ Եկէ՛ք յիշենք նաեւ այն որբերը, որոնք աւիշը դարձան մեր ժողովուրդի յարութեան ու յուշարարը՝ պահանջատիրութեան։

Արդ, կոչ կ'ուղղենք մեր թեմերու Թեմակալ Առաջնորդներուն ու Ազգ. Իշխանութեանց եւ մեր կեանքէն ներս գործող բոլոր կառույցներուն, այս մտածումներով ու սպասումներով առաջնորդուած 2014 տարուան ընթացքին զանազան ձեռնարկներու ու գործնական քայլերու Ճամբով առաւել խորացնելու տարեց սերունդին նկատմամբ մեր հոգածութիւնը, սէրն ու լարգանքը։

Կ'աղօթենք առ Բարձրեալ Աստուած որ Իր երկնային ինամքին ու պաշտպանութեան ներքեւ միշտ պահէ յառաջացեալ տարիքի մէջ գտնուող մեր հայրերն ու մայրերը, իրենց կեանքը լեցնելով առողջութեան ու երջանկութեան առատագոյն բարիքներով։

Աղօթարար՝ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ

PONTIFICAL ENCYCLICAL: 2014, THE YEAR OF THE ELDERLY

The Elderly in the Bible

On any occasion in our lives, as a Christian people we must always consult the Bible, to begin correctly and to receive clear direction. In the Old Testament, the words "elder" (dzer) and "senior" (yeretz) are usually used as synonyms, and they are mentioned on many occasions in different meanings. Hence, the

elderly were recognized as the city's legislators, or judges, or the family's noblemen and rulers (Genesis 50:7), leaders of a tribe and dynasty (Numbers 11:16-17), or a nation's major representatives and leaders (Exodus 3:16). As individuals with experience, who worked hard, it was the function of the elderly to propose solutions to problems in the life of society, to study the concerns of the people and meet their needs, and to act as leaders.

Likewise, in the New Testament elders are looked upon as church leaders and clergy (1 Peter 5:1-2), leaders of cities (Luke 7:3), as well as those who were zealous guardians of tradition (Matthew 15:1-3). It was the duty of elders to

closely follow concerns that arose in the Church (Acts 15:1-3), be attentive to the protection of the Church's order and laws (Matthew 15:1-2), to encourage the spread of God's Word (1 Peter 5:1-2), to secure the Church's economic income (Acts 11:29-30), and when needed to call meetings to examine questions and problems that arise concerning the Church (Luke 22:66).

The ample references to the elderly in the Bible clearly demonstrate that the elderly were not left out of the central page of society and life, and that they even had an important place and role in the scope of the divine revelation. The elderly have been considered to be synonymous with prudence, wisdom, experience, and objectivity, and therefore have been entrusted with the task of leadership.

Seniors in the Life of the Church

The Church Fathers gave an important place to the elderly in their writings in biblical commentaries, and church history, always citing biblical testimonies and events, including the special role of the elderly in Christian witness and the task of administering church affairs. Indeed, the Church Fathers have many thoughtful proposals and testimonies about the elderly. For example, Patriarch John Chrysostom compares the elderly person to old wine, saying that the more the wine ages the more valuable it becomes. Similarly, it was stated that when persons who are filled with the spirit of God become old, they become more valuable and helpful to society.

Naturally, throughout history, as a Christian people, we have demonstrated special respect and care for the elderly. Our Church Fathers, beginning with St. Gregory the Illuminator and St. Nerses the Great, to St. Nerses the Graceful, and from Khrimian Hairig to more recent times, our Catholicoi paid special attention to the elderly, not only to make our nation's elderly the object of our obligation, but also to emphasize the necessity of building old age homes and retirement residences.

Honoring and Taking Care of the Elderly

The presence and role of the elderly in society as depicted in the Bible and by our Church Fathers, as well as in the pages of our people's history, clearly portray the elderly as being prudent, tranquil, righteous, sober, and experienced. Throughout history, these five traits of human behavior, mentality, and action have been present

in some large or small measure in the elderly. Indeed, the elder generation is the lifeline of society, the foundation of the family, and one of the strong footholds of any organization. Our people must show a high level of care, love, attention, and respect for their elders.

Therefore:

First, it is necessary to protect the elderly. It is absolutely unacceptable for our seniors to be considered to be separate from our life and in the margins where they are powerless, unprotected, and without a guardian. The supreme guardian is the nation, with all of its many levels, and those in leadership positions. Seniors are an undivided and indivisible part of our living nation—our Fatherland, our Church, and our organizations. Let us not forget also that the prime guardians of the elderly in their weak and difficult times, is the family, their children. The spirit of duty must be firmly rooted in the consciousness of our nation's children.

Second, it is necessary to respect the elderly. It is God's commandment to respect the elderly, and it is also the basis of the laws of humanity. Seniors must be respected for their long years of service, for the experience and wisdom they have gained. It is necessary for us to respect the elderly in our everyday life, give them love and care, and establish a special relationship with them. Sometimes we see indifference towards the elderly by the young generation. The education of our youth must include the necessity of respect for the elder generation.

Third, it is necessary to listen to the elderly. Generally in our lives we are inclined to speak, advise, and command. Listening inspires self-confidence and leads us to wisdom. In order to know the truth it is necessary to turn to the elderly and to their experiences in life, both positive and negative, and utilize their experience as a guide to our lives. Indeed, the new generation has much to learn from the old generation. No matter how much the New World has enriched the new generation with immense progress, the lifelong experience of the elderly has an important role alongside the younger generation's expertise.

Fourth, it is necessary to care for the elderly. With advancing age the elderly have need of care in every way. Those who neglect to perform their filial obligations properly and fully toward their aged parents are regarded to be sinful according to the principles of Christianity and civilized society. And, as we stated, those seniors without a guardian, without family or relatives, must be cared for by the nation. This has always been the case. Indeed, not only in early or recent history, but also today, to the credit of our people, we continue our special care of our elderly. In Lebanon, Syria, Greece, the United States, and elsewhere, we have well organized homes for the aged and retirement homes, where the older generations of our nation find shelter and receive medical care.

Conclusion and Gratitude

In declaring the current year as "The Year of the Elderly," we wish to express our high pontifical appreciation of all organizations,

(Cont. page 6)

Ազգայիւն Առաջնորդարանէն՝

From the Prelacy:

Uቦዋበ3 ጊቴኑበ ነገር SOUQ - THE FEAST OF STS. GHEVONTIANK



The annual Ghevontiantz clergy gathering was hosted by Holy Cross Church, Troy, New York from February 24-26, 2014. Various topics of interest were discussed included the celebration of the "Year of the Elderly," and Holy Week Services.

PONTIFICAL ENCYCLICAL: 2014, THE YEAR OF THE ELDERLY (Cont. from page 5)

benefactors, guardians, physicians, and nurses who care for our elder generation. Dearly beloved, you are engaged in God-pleasing work. Always remember the parable of the Good Samaritan in the Gospel (Luke 10:30-37), and continue your dedicated service with even greater faith and dedication.

We wish to express our deep appreciation and warm thanks also to the churches and organizations in Switzerland, Germany, United States, and Denmark, who after the Genocide established homes for

the elderly in Lebanon, Syria, and Greece, and later entrusted those institutions to our people while continuing for a time their financial support. On this occasion we offer our heartfelt suggestions:

a. It must be the sacred duty of all families to zealously provide the senior members of their family with the necessary care. b. It is necessary for the children of our nation, and especially our young generation, to strengthen their love and zeal for their elders. c. It is necessary to financially support existing old age homes and health centers so that they will be able to provide greater care in their humanitarian service.

d. Impelled by our concern to make the care of our elderly better organized, it is necessary to establish new programs utilizing modern and special methodology. Our fellow compatriots who have the financial means must be earnestly concerned about the future wellbeing of the institutions caring for the elderly.

Following the Genocide, we saw the silent suffering of our mothers and fathers who lived through massacre and exile. And then followed

the generation of orphans, who also lived through the terrible aftermath of the Genocide. Now and forever, we must

never—never!—forget the tortured lives of our grandfathers and grandmothers.


The elder generation, with its deep faith, strong will, hard work, and enlightened vision built our people's rebirth. Honor and respect to our elder generation! On the eve of the 100th anniversary, let us, with deep emotion and faithfulness, remember all of our elders who were victims of the Genocide. Let us also remember the orphans who became the lifeline of the resurrection of our people, and the reminders of our rights.

Therefore, we ask our Prelates, Clergy, National Representative Assemblies, Religious and Executive Councils, Boards of Trustees, and all of our affiliated community organizations to organize events during 2014, taking into consideration these thoughts and expectations that will strengthen the care, love, and respect we have for the elder generation.

We pray to Almighty God to keep in his heavenly care and protection our fathers and mothers in their advanced age, and fill their lives with good health, happiness, and abundant goodness. Prayerfully,

ARAM I Catholicos of the Great House of Cilicia

TRUSTEE NEWS



TRUSTEE INDUCTION SERVICE

On the Sunday of *Poon Paregentan*, March 2, 2014, an induction service was held for the 2014 Board of Trustees which included incumbents, several newly elected members and one alternate. The service, conducted by Der Hayr had been developed in order to give the community as well as the new Board of Trustees members a better understanding of their role within the life of the church. Pictured above are our Board members taking a solemn oath to faithfully carry out their duties as Trustees of St. Stephen's Church and serve its people to the best of their ability.

Several of the Board members participated in the service by reading passages from scripture (Acts 6: 1-7; Luke 14:16-21). During the prayer, Der Hayr asked God to "look with your mercy upon these newly elected Board of Trustees members as the stewards and the "burden-carriers" (*hokapartsoo*) of this Church." He also prayed that God "...fill them with the spirit of humility, prudence, kindness...[to become] earnest and wholehearted followers of Christ knowing and believing the truth and doing everything with patience."

The prayer concluded with the request that the Board members would be "...gentle and truly courteous to all...[and] a model for believers in love, faith, clean thoughts and in all things...[remaining] firm in the Armenian Apostolic Church's teachings and traditions, anchored in the living spirit of your Word."

At the end of the service, Der Hayr gave a sermon on the biblical understanding of service, emphasizing that it is first and foremost a calling from God. He said that those who serve as administrators do so at God's invitation and by using their Godgiven talents to serve God and help in accomplishing the Church's mission. Der Hayr congratulated the new Board and wished them success and fruitful service.

Pictured below are members of the Board listening to Der Hayr's message. They are, left to right, Becky Megerdichian (Alternate), Noushig Hagopian, Tamar Kanarian (Secretary), Houry Daghlian, Craig Avedikian, Armen Knaian, Lucy Hoosian (Treasurer), Michael Guzelian (Vice Chairman), Raffi Manjikian (Chairman) and Armen Chakmakjian. Missing from the picture: Heather Krafian and Hovsep Melkeshian.



NEW WEEKLY E-BULLETIN



In order to optimize communication with our parishioners, St. Stephen's Trustees have instituted an E-Bulletin which will be sent out to our e-mail list on a weekly basis every Friday. The Bulletin contains liturgical information, such as readings and requiems as well as a schedule of church events. If you have not received a copy of this new publication, and wish to do so, please go to our website at www.soorpstepanos.org to add your email address to our list.

SPECIAL THANKS

With the worst of the Winter season behind us, the Board would like to express its heartfelt thanks to church member Vahan Kouyoumjian of Lexington; also a long-time member of our church choir, who donated all of the ice-melt we used this year, as he has been doing faithfully for the past many years. God knows we used a lot this year!

Vahan also carefully grows his own sweet basil which he also donates every year to be used during special services on the occasion of the Feast of the Exaltation of the Holy Cross.

Thank you, Vahan for helping to keep us safe during this extremely stormy, icy and inclement winter.



ጎኮ ՆԳՇԱԲԹԻ, ԱՊՐԻ Լ 24

Մ. Պատարագ/Մատաղի Օրհնութիւն Մ. Ստեփանոս Հայց. Եկեղեցի, Առաւօտեան Ժամը 10ին

THURSDAY, APRIL 24

Divine Liturgy/ Madagh Blessing, St. Stephen's Church 10:00 A.M.

GOD'S HOUSE. YOUR HOME

Beginning this Christmas season, the Board of Trustees launched a comprehensive initiative for 2014 to welcome new members to our St. Stephen's family and bring back to the fold those who have let their membership lapse. If you are not currently a dues-paying member of our church, we invite you to consider becoming one. Annual dues are \$125.00 (less than 35¢ a day) payable weekly, monthly or in a lump sum. God depends on you to keep His church strong and viable in order to continue its ministry of service in meeting the spiritual, sacramental and educational needs of all of our parishioners.



SUPPORT THE JRAK

Enclosed is my donation to help keep this important link to the St. Stephen's community operating.

D	tephon's community operating.
NAME:	
ADDRESS:	
DONATION AMOUNT:	
Kindly send your donation	ons to the church office, 38 Elton Ave., Watertown, MA

LADIES GUILD NEWS

In January we did not have a meeting. However, the ladies were kept busy with hokijashes and several bake sessions in preparation for the Palm Sunday Bake Sale in April.

Our first meeting of the new year was held on February 10, 2014, at noon with pizza, popcorn and the movie "Lost and Found in Armenia".

Our second daytime meeting was held on Monday, March $10^{\rm th}$, after their meeting ladies learned to knit scarfs taught by Sona Aslanian.

Our Armenian Cooking Classes are becoming quite popular with a khadaif lesson by Sona Iradian was held on Saturday, February 15th.

ԱՆՈՒՇԱՎԱՃԱՌ

Ս. Ստեփանոս Եկեղեցւոյ Տիկնանց Միութիւնը զձեզ կը հրաւիրէ իր աւանդական Ծաղկազարդի Տօնին առթիւ կազմակերպած անուշավաճառին, որ տեղի պիտի ունենայ կիրակի, Ապրիլ 13, 2014ին, Եկեղեցւոյ ներքնասրահին մէջ։ Համեղ Չէօրէկ, Թելանուշ-Խատաիֆ, Պանիրով Պէօրէկ եւ զանազան անուշեղէններ։ Սուրճ եւ անուշեղէն պիտի հրամցուի։







PALM SUNDAY BAKE SALE

BY ST. STEPHEN'S LADIES' GUILD

Sunday, April 13, 2014

At St. Stephen's Armenian Apostolic Church Hall Choreg, Choreg Loaves, Khadaif, Cheese Boreg & Assorted Pastries. Coffee and Pastry will be served



U. UՏԵՓԱՆՈՍ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ Տեղեկատու - Ձմեռ 2014 Տնօրէնուհի՜ Հուրի Պոյամեան

Չմրան ամիսները եղան շատ զբաղուած շրջան մը, Ս. Ստեփանոս Ազգ. Վարժարանի համար։ Իրար յաջորդեցին զանազան ձեռնարկներ եւ իրագործուեցան նոր նախաձեռնութիւններ։

<u> 1.- ԱՐՏԱ - ԴՊՐՈՅԱԿԱՆ ԴԱՄԸՆԹԱՅՔՆԵՐ</u>

Չմրան շրջանին տեղի ունեցան դպրոցէն վերջ հետեւեալ դասընթացքները.-

Երեքշաբթի՝ Գիտութիւն (Մանկապարտէզ - Գ. կարգեր)

Չորեքշաբթի՝ Ճատրակ (Մանկապարտէզէն և Դ. կարգ)

Չորերշաբթի՝ Kids Yoga (Մանկամսուր)

Չորեքշաբթի կէսօրին՝ Ընթերցարան (Ե. կարգ)

հինգշաբթի՝ Robotics (Գ.- Ե. կարգեր)

Հինգշաբթի ՝ Քարաթէ (Մանկապարտէզ - Ե. կարգ)

Ուրբաթ՝ Պասքեթպոլ (Գ.- Ե. կարգեր)

2.- ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

- Նոյ. 5ին Բ. եւ Գ. դասարաններու աշակերտները այցելեցին Բլիմութ Բլանդէյշըն։
- Նոյ. 13ին Գ., Դ. եւ Ե. կարգերու աշակերտները ներկայ եղան Ուիլոք Ֆամիլի Թիաթըրի կատարողութեամբ **Հոպիթի** թատերգութեան։
- Փետր. 6ին, Բ. Ե. կարգերու աշակերտները այցելեցին Պոսթընի Գիտական Թանգարանը։

<u> 3.- ԴՊՐՈՑԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՃՈԽԱՑՆՈՂ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ</u>

- Դեկտ. 9ին դպրոց հրաւիրեցինք երաժիշտ պրն. Հոն Պապոյեանը, որ կը դասախօսէ Պըրքլի երաժշտանոցին մէջ։ Ան տօնական օրերու յարմար երաժշտութեամբ խանդավառեց մեր Մանկամսուրի աշակերտները, միեւնոյն ժամանակ անոնց փոխանցելով կարեւոր երաժշտական գիտելիքներ։
- Դեկտ. 16ին Մարթին Յարութիւնեան եւ Արա Սարգիսեան Մանկամսուրի փոքրիկներուն ներկայացուցին հայկական երաժշտական գործիքներ (Տհոլ, Տուտուկ եւայլն);
- Փետր. 3ին տեղի ունեցաւ Տիկնիկային թատրոն Մանկամսուրի եւ Մանկապարտէզի աշակերտներուն համար Սրահին մէջ։

<u>4.-ሆԱՆԿԱՄՍՈՒՐԻ ԵՒ ሆԱՆԿԱՊԱՐՏԷՉՒ ԾՆՈՂԱ-</u> ՈՒՍՈՒՅՉԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ (1/27 - 2/7)

Այս ժողովները տեղի ունեցան անմիջապէս, որ Մանկամսուրի եւ Մանկապարտէզի աշակերտները ստացան իրենց վիճակացոյցները։

<u>5.- Տեսակցութիւններ</u>

- Յունուար 31ին Մանկապարտէզի ծնողները դպրոց հրաւիրեցինք տեսնուելու Տնօրէնին եւ Ա. դասարանի ուսուցիչներուն հետ, ծանօթանալու համար Նախակրթարանի ուսումնական ծրագրին։
- Փետր. 11ին Մանկամսուր Բ.ի ծնողները Մանկապարտէզ հրաւիրեցինք տեսնուելու համար Տնօրէնին եւ Մանկապարտէզի ուսուցիչներուն հետ, ծանօթանալու համար Մանկապարտէզի ուսումնական ծրագրին։

<u> 6.- ՄԱՆԿԱՄՍՈՒՐՒ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՒՒՆ</u>

Մանկամսուրի ընդունելութիւնը տեղի ունեցաւ Մարտ 12ին Ժամը 9էն - 10ը յատուկ ծրագիր մը պատրաստուած էր նորեկ աշակերտներուն համար։ Իսկ ժամը 10էն 11 ծնողները առիթը ունեցան տեսնուելու տեօրէնին եւ ուսուցիչներուն հետ։

7.- ԾՆՈՒՆԴԻ ՀԱՆԴԷՍ (ԴԵ៤Տ. 13)

Ծնունդի հանդէսը տնղի ուննցաւ Յովնաննան սրահին մէջ։ Ծնողննրը խանդավառութնամբ գնահատնցին աշակնրտննրու նլոյթը։ Մանկամսուրէն մինչնւ Ե. կարգի աշակնրտննրը ննրկաննրուն փոխանցնցին տօնական օրնրու ջնրմութիւնը Ծննդնան նրգնրու ընդմէջէն։

Յունուար 4ին մեր աշակերտները, կիրակնօրեայ եւ Շաբաթօրեայ Դպրոցներու աշակերտներուն հետ միասին Ս. Հաղորդութիւն ստացան Սբ. Ստեփանոս Եկեղեցւոյ մէջ, ապա նախաճաշով հիւրասիրուեցան եկեղեցւոյ ներքնասրահին մէջ։

<u> 9.- ԱՆՈՒՇԱՎԱՃԱՌՔ</u>

- Ե. կարգի ծնողները երկու Անուշավաճառքներ կազմակերպեցին։ Ծնունդի հանդէսի գիշերը, Դեկտ. 13ին, Հայ կեդրոնի մէջ։
- Ծնունդի օրը, Յունուար 6ին, Ս. Ստեփանոս Եկեղեցւոյ ներքնասրահին մէջ։

10.- ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ

- Մարտ 3ին Գ.-Ե. կարգերու աշակերտները ընկերակցութեամբ իրենց ուսուցիչներուն ուղուեցան դէպի Ս. Ստեփանոս եկեղեցի, ուր Տէր Անդրանիկ Աւագ Քինյ. Պալձեանը իրենց խսսեցաւ Վարդանանց հերոսներու եւ անոնց խաղացած կարեւոր դերին մասին, մեր կրօնի եւ ազգային ինքնութեան պահպանման մէջ։
- -Այս նոյն առիթով Մանկամսուրէն մինչեւ Ա. կարգի աշակերտները Վարդանանցի նուիրուած արտասանութիւններ եւ երգեր սորվեցան։

<u>11. - ՏԵՍՈՂՈՒԹԵԱՆ ՔՆՆՈՒԹՒՒՆ</u>

Մանկամսուրէն մինչեւ Ե. կարգի աշակերտներու Տեսողութեան Քննութիւնը տեղի ունեցա։ Յունուար 8, 15, 21 եւ 23ին։

12. - UNICEF

Եունիսէֆի համար այս տարի մեր աշակերտները գոյացուցին 192.95 տոլար։

13. WATERTOWN SAVINGS BANK ANNUAL CUSTOMER'S CHOICE AWARD

Ուաթըրթաուն Մէյվինկս Դրամատունէն ստացանք 3,154 տոլար։ Այս գումարը կը համապատասխանէ Ս. Ստեփանոս Ազգ. Վարժարանի ստացած քուէներու։

14.- ԽՈՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

- Ճոն Պապոյեանին իր տարեկան ելոյթին համար, Մարթին Յարութիւնեանին եւ Արա Սարգիսեանին, հայկական երաշտութիւն եւ երաժշտական գործիքներ ներկայացնելուն համաո։
- Վահէ Նիկողոսնանին, կամաւոր կնրպով իբրնւ Պասքէթպոլի մարզիչ ծառայնլուն համար։

ST. STEPHEN'S ARMENIAN ELEMENTARY SCHOOL Newsletter – Winter 2014 By Houry Boyamian, Principal



The winter months were a very busy time for the School, with various enrichment programs and special holiday celebrations.

After School Enrichment Programs

We had two new initiatives for the winter session: the Kids Yoga for the preschoolers and the Karate class which we offered again after a two year hiatus. Below is the complete list of the after school enrichment programs that were offered during the Winter Session:

- Mad Science (K-3): Tuesdays
- Chess (K-4): Wednesdays
- Kids Yoga (N): Wednesdays
- Robotics (Grade 3-5): Thursdays
- Karate (K-5): Thursdays
- Basketball: Fridays
- The Book Club (Grade 5): Wednesdays

*The book club is offered in Armenian in the Winter Session.

Field Trips

- -On Nov. 5, Grades 2 and 3 took a Field Trip **to Plymouth Plantation**. -Nov. 13, Grades 3, 4 and 5 attended the presentation of **The Hobbit** by JRR Tolkein, at the Wheelock Family Theater.
- On Feb 6, Grades 3, 4 and 5 took a field trip to the **Museum of Science**, where besides visiting the Exhibit Halls and participating in Drop-In Activities, at Design challenges, Hands-on laboratory and Investigation Station, they attended at Mugar Omni Theater an IMAX film on *The Human Body* and at the Hayden Planetarium a program called *Explore the Solar System*.

Other Enrichment Programs

- On Dec. 9, **Mr. John Baboyan**, professor at Berkley College for Music lead a Christmas sing along and nursery rhymes with our preschool students accompanied by his guitar
- On Dec. 16, **Mr. Martin Haroutunian**, and Ara Sarkissian introduced our preschool students to Armenian folk music and musical instruments, such as shevin, duduk and deho to our preschoolers.
- *On both days, our preschool students joined the musicians, singing Armenian and holiday songs.
- On the morning of Feb. 3 **The Pumpernickel Puppet Theater** presented an interactive and exciting puppet show for our preschool and Kindergarten, in ACEC Hovnanian Hall.

Christmas Concert – Dec. 13

As in the past, during our Christmas Concert our N-5 students conveyed the warmth and the beauty of the holiday season through Christmas and New Year songs.

Holy Communion

On January 4, 2014 our K-5 students, along with the Sunday school and Saturday School students, received Holy Communion at St. Stephen's Church. After the church service the students were served breakfast in the Church Hall.

<u>Bake Sales</u> -On December 13, the evening of our Christmas Concert, the Gr. 5 parents hosted a bake sale, in the ACEC lobby to benefit the Graduating Class Trip to Armenia.

-On January 6, on Armenian Christmas Day, Gr. 5 parents organized

the school's Annual Bake Sale at the St. Stephen's Church Hall, after the church service.

Preschool and Kindergarten Parent-Teacher Conferences

Our Preschool and Kindergarten students received their progress reports on Friday, January 24, 2014, followed by Parent-Teacher Conferences.

Moving Up Days

<u>-Kindergarten Parents</u>, whose children will enter Gr. 1 next year, were invited to meet with the Principal and then with the Gr. 1 teacher to get acquainted with the elementary school and the class curriculum on Friday, January 31, at 9:15 AM, in the Gr. 1 classroom.

<u>-Nursery II Parents</u> whose children are going to enter Kindergarten next year were invited to meet with the Principal and the K teachers on Tuesday, February 11, at 8:30 AM, in the Kindergarten classroom.

Preschool Open House

The Preschool Open house was held on March 12.

- -A special activity was planned for new preschool students to familiarize them with their new school environment.
- -From 10:00AM-11:00AM parents had the opportunity to talk with the preschool director and the teachers.

The Preschool Registration from January - May

Vartanants Celebration

- On, Friday, February 28, 2014 Grades 3 through 5 students accompanied by their teachers went to St. Stephen's Church where Rev. Father Antranig Baljian spoke about Vartanants Saints who played a pivotal role in the preservation of our religion and our Armenian identity.
- On this occasion N-Gr.1 students did activities, as well as learned poems and songs dedicated to Vartanants.

<u>Vision Screening</u>- The Vision Screening of our N-5 students by professors and interns from The New England College of Optometry were conducted on January 8, 15, 21, and 23.

Trick or Treat for UNICEF

This year, in the month of October our students gathered \$192.95 for UNICEF annual fund drive.

Watertown Savings Bank

We would like to thank all those who voted for our school at Watertown Savings Bank Annual Costumer's Choice Award. Thanks to your votes the school will receive \$3,154 from the bank on March 4, at the Awards Presentation.

Many Thanks

- To John Baboyan, for his annual performance in December for our preschool students.
- To Martin Haroutunian for his presentation of traditional Armenian musical instruments.
- To Mr. Vahe Nigoghosian for dedicating his time to the school as volunteer basketball coach.



ST. STEPHEN'S ARMENIAN ELEMENTARY SCHOOL PICTURES





ST. STEPEHEN'S ARMENIAN ELEMENTERY SCHOOL DONATIONS

Annual Fund Donations

ARS Cambridge Shushi Chapt	er \$1,000	John & Arpy Avedissian	\$100	Vartkis Paghigian	\$50
Nancy Guzelian	\$1,000	Simon & Lucy Essajanian	\$100	John & Lisa Baboian	\$25
Alice Setian	\$750	Astor & Lucy Guzelian	\$100	Richard & Athena Kanarian	\$25
Charles & Sona Aslanian	\$500	Zevart Hollisian	\$100		
Yervant & Mary Krafian	\$500	James Kalustian	\$100	In Memory of Garo Sedrakian	
John Mirak Foundation	\$500	Stephen Karoghlanian	\$100	Total Donations - \$100	
Anri Grigoryan		Varouj & Alice Minassian	\$100	Nazaret & Lena DerKevorkian	
& Armella Shakaryan	\$295	Sarkis & Seta Ourfalian	\$100		
Andrew & Alice Guzelian	\$200	Robert & Rosine Patterson	\$100	In Loving Memory of	
Starrie Alemian	\$100	Albert & Leona Arsenian	\$50	Alice Talanian	
Ned & Aroxie Apigian	\$100	Dickran & Marilyn Haroian	\$50	Total Donations - \$500	
Harout & Mary Arabian	\$100	Armen & Anoush Knaian	\$50	Lucy Talanian & Family	

ST. GREGORY OF DATEV INSTITUTE SUMMER PROGRAM

28th Annual Armenian Christian Studies
SUMMER PROGRAM
For youth ages 13-18
June 30 - July 6, 2014

Julie 30 - July 6, 2014

St. Mary of Providence Center Elverson, Pennsylvania

Call the AREC office at 212-689-7810 Go Online to www.armenianprelacy.org

Or contact the church office at 617-924-7562 Sponsored by the Armenian Religious Education Council






St Stephen's Armenian Elementary School

Mayrig & Me

Manoug & Mayrig
Playgroup

Spring Session Begins March 10, 2014



A Music & Movement Program

For children 18 months –2 yr. 9 months



All classes are 45 minutes,
Held on Monday mornings 9:30 am,
at St. Stephen's Armenian Preschool
Registration Fee: \$75

Class dates:

March 10, 17, 24, 31, April 7, 14, 28, May 5, 12, & 19

To register please call 617-923-0501 or email morchanian@ssaes.org







SPRING SESSION BEGINS March 14, 2014

For children 9 months to 17 months

Friday Mornings 9:30 am - 10:30 am



Playgroup meeting dates:

March 14, 21, 28,

April 4, 11,

May 2, 9, 16,23,30

St. Stephen's Armenian Preschool, 46 Elton Ave., Watertown

The children will have the opportunity to interact and play with other Armenian infants and toddlers in a warm and friendly environment. Parents will have the opportunity to meet other Armenian families with children in the Greater Boston area.

Registration Fee: \$60

To register please call 617-923-0501 or email morchanian@ssaes.org







St. Stephen's Armenian Elementary School 2014-2015 Academic Year

Preschool Registration Begins on January 13, 2014 Preschool Open House March 12, 2014

To schedule an appointment please call the preschool office at (617) 923-0501 or E-mail morchanian@ssaes.org

For more information about the school please visit our website at www.ssaes.org



ԵՄԱՆԱԿԱՑԵՐԱԳԱՄԱՆԱՄԱՆ ԵՐ Մ. ՋԱՏԱԴ ԵՄԵՂԵՅԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈԳԹԵԱՆՅ

ԾԱՂԿԱԶԱՐԴ, ԿԻՐԱԿԻ, Ապրիլ 13, 2014 ՅԻՇԱՏԱԿ ՔՐԻՍՏՈՍԻ ՄՏԱՆԵԼՈՅՆ ԵՐՈՒՍԱՂԷՄ

Պատարագիչ եւ Քարոզիչ՝ ԲԱՐՁ. Տ. ԾԱԿԱՆ ԱՐՔ. ՉՕԼՈՅԵԱՆ, Առաջնորդ

Գիչերային և Առաւօտեան Ժամերգութիւններ	Մերուսա <u>ր</u> ուն գուղն 6.00-ին
Սուրբ Պատարագ	Առաւօտևան Ժամը 10։00-ին
Դոնբացէք	
Կնքահայր` Յովհաննէս Աւ. Սրկ. Տուրսուն <mark>ե</mark> ա	ជ
ՅԻՇԱՏԱԿ «ՏԱՄՆ ԿՈՒՍԱՆԱՑ» ԱՒԱԳ ԵՐԵՔՇԱԲԹԻ, Ապրիլ 15, 2014	
Երեկոյեան Ժամերգութիւն	Երեկոյեան Ժամը 7:00-ին
ՅԻՇԱՏԱԿ ՎԵՐՋԻՆ ԸՆԹՐԵԱՅ ՔՐԻՍՏՈՍ ԱՒԱԳ Հ ՒՆԳՇԱԲԹԻ, Ապրիլ 17, 2014	Ь
Կարգ Ոտնլուայի Կարգ Խաւարման	
ՅԻՇԱՏԱԿ ՉԱՐՉԱՐԱՆԱՅ, ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԹԱՂՄԱ ԱՒԱԳ ՈՒՐԲԱԹ, Ապրիլ 18, 2014	մՄՈ <mark>Ⴧ</mark> ሀሳՂՁ մմ
կարգ Խաչելութեան	
Կարգ Թաղման	Երևկոյևան Ժասը /:00-ին
ՃՐԱԳԱԼՈՅՑ Ս. ՁԱՏԿԻ ԱՒԱԳ ՇԱԲԱԹ, Ապրիլ 19, 2014	
Ճաշու Ժամերգութիւն	Երեկոյեան Ժամը 6:00-ին
Ճրագալոյցի Ս. Գրոց Ընթերցումներ	1 H b 6 1 6 62016
եւ Դանիէլ Մարգարէի Գիրքէն Ընթերցում Ճրագալոյցի Ս. Պատարագ	
ՏՕՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅՒՍՈՒՍՒ ՔՐ ՍՈՒՐԲ ՉԱՏՒԿ, Ապրիլ 20, 2014	ԻՍՏՈՍԻ
Գիչերային և Առաւօտեան Ժամերգութիւններ	Առաւօտևան Ժամը 9։00-ին
Հանդիսաւոր Ս. Պատարագ	
Պատարագիչ եւ Քարոզիչ՝	

Պատարագիչ նւ Քարոզիչ՝ ԱՐԺ. Տ. ԱՆԴՐԱՆԻԿ ԱՒ. ՔՀՆՅ. ՊԱԼՃԵԱՆ, Հովիւ

ተ ተ ተ

Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԱԽԱՃԱՇ

Շաբաթ, Ապրիլ 19, 2014ին, առաւստնան ժամը 9:30-ին` Եկնղնցական Արարողութիւնէ նւ Ս. Հաղորդութիւնէ նտր Եկնղնցւոյս Ամէնօրնայ, Շաբաթօրնայ նւ կիրակնօրնայ Վարժարանննրու աշակնրտութիւնը պիտի մասնակցին նկնղնցւոյ ննրքնասրահին մէջ, տնղի ուննցող նախաճաշի հիւրասիրութնան, նախաձնոնութնամբ կիրակնօրնայ Վարժարանին կողմէ։

SCHEDULE OF SERVICES FOR HOLY WEEK & EASTER

Remembrance of the Entry into Jerusalem of Our Lord Jesus Christ PALM SUNDAY, April 13, 2014

Celebrant & Preacher:

HIS EMINENCE ARCHBISHOP OSHAGAN CHOLOYAN, Prelate

Nocturnes & Matins
Godfather: Deacon Hovhannes Doursounian
Remembrance of the Ten Virgins' Parable GREAT & HOLY TUESDAY, April 15, 2014
Vespers
Remembrance of the Last Supper of Our Lord Jesus Christ GREAT & HOLY THURSDAY, April 17, 2014
Washing of the Feet
Remembrance of the Passion, Crucifixion & Burial of Our Lord Jesus Christ GREAT & HOLY FRIDAY, April 18, 2014
Service of the Passion & Crucifixion
Holy Resurrection Vigil GREAT & HOLY SATURDAY, April 19, 2014
Mid-Day Service (Jashoo)
Feast of the Holy Resurrection of Our Lord Jesus Christ EASTER SUNDAY, April 20, 2014
Nocturnes & Matins 9:00 A.M. Divine Liturgy
Celebrant & Preacher:

REV. ARCHPRIEST ANTRANIG BALJIAN, Pastor

+ + +

HOLY COMMUNION AND BREAKFAST

On Saturday, April 19, 2014, at 9:30 A.M. (immediately following the Church Service), breakfast reception to follow in the Church Hall for our three schools (Sunday, Saturday & Elementary), sponsored by Sunday School.

ዓኑቦያ Նበኑኮቦቲ - GIVE BOOKS FOR GIFTS



Մեկնութիւն Հայ Եկեղեցւոյ Հաւատամքի

Զարեհ արք. Ազնաւորեան, անգլերէնի թարգմանեց Շանթ սարկ. ԳազանՃեան, Նիւ Եորք, Առաջնորդարան Ամերիկայի Արեւելեան Թեմի, 2013. Գին՝ 15 տոյար (թղթակազմ)։

Այս երկլեզու հրատարակութիւնը կը ներկայացնէ լուսահոգի Զարեհ արք. Ազնաւորեանի դասախօս-

ութիւններուն ամփոփումը։ Հայ Եկեղեցւոյ Հաւատամքի տող առ տող, բառ առ բառ բացատրուած է, հիմնուած այն ուղղափառ դաւանութեան վրայ, որուն միշտ հաւատարիմ մնացած է Հայ Եկեղեցին։ Ան քրիստոնէական հաւատքի գիտելիքները կը ներկայացնէ ընթերցողին, ինչ որ անհրաժեշտ է որ գիտնալ իւրաքանչիւր հաւատացեալ։

Commentary on the Nicene Creed

Archbishop Zareh Aznavorian, translated by Dn. Shant Kazanjian New York: Armenian Apostolic Church of America, 2013. Price: \$15 (softcover). This bilingual edition is the synopsis of lectures given by late Archbishop Zareh Aznavorian. The Nicene Creed is explained line by line, word by word, in accordance with the orthodox faith, to which the Armenian Church has always remained faithful. By way of explaining the creed, the book presents the beliefs of the Christian faith that are essential for every believer to know.



Armenian Holiday Traditions: An Illustrated Guide for Children


Annie Seropian (Author), Elize Bogossian (Illustrator), Montreal, Anne Seropian, 2012. Price: \$20 (softcover).

This delightful children's book describes traditional Armenian celebrations of various feast days and holidays such as New Years,

Christmas, Easter as well as Genocide Memorial Day, Independence Day and other special occasions. The book also relates the meaning and importance of why these days are celebrated.

Հայաստանի Պատմական Ատլաս

